ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/116

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.05.2021թ. թիվ 26/26-1/6916-2021 գրությամբ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ պաշտպանության նախարարության (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.04.2021թ. թիվ ՊՆ/02/2253-2021 գրության հիման վրա 05.05.2021թ. թիվ 26/26-1/6916-2021 գրությամբ նախաձեռնել է «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ինտերգեոտեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.05.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2021/116 ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ հայտնում ենք, որ չկան բավարար հիմնավորումներ մեր ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար ներքոնշյալ պատճառաբանությամբ.

1. ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ 2021թ-ի ապրիլի 19-ին ծանուցել է մեր ընկերությանը տեխնիկական բնութագրի շտկման վերաբերյալ, սակայն մեր ընկերության կողմից սահմանված ժամկետում շտկում չի իրականացվել: Այս պնդումը հիմնավոր չէ, քանի որ.

2. ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունը սահմանում է, որ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն.

1) ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 32-րդ կետի 11-րդ կետը սահմանում է"

«էլեկտրոնային եղանակով ծանուցումներն իրականացվում են տեղեկություններն էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների, որի ժամանակ ծանուցումներն իրականացվում են թղթային եղանակով: Հրավերով և հայտով նախատեսվում են պատվիրատի և մասնակցի Էլեկտրոնային փոստի հասցեները: Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ հավաստագիրը՝ զետեղված «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Վերը շարադրված իրավանորմերի վերլուծությունից հետևում է, որ ծանուցումը ուղարկելիս այն փետք է ուղարկվի էլեկտրոնային եղանակով մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին, իսկ ծանուցումը պետք է լինի էլեկտրոնային թվային ստորագրությամբ կամ պետք է ներկայացվեր հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված տարբերակը: Սակայն, ինչպես երևում է ՀՀ պաշտպանության

նախարարության կողմից տրամադրված նյութերից, վերջինս ծանուցումն ուղարկել է geoproicelc@gmail.com էլ. փոստի հասցեին (ծանուցումների քաղվածք), մինչդեռ մեր ընկերության կողմից ներկայացված հայտում (հավելված N 1) նշված է եղել info@igt.am էլեկտրոնային փոստի հասցեն: Բացի այդ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված նյութերում առկա ծանուցման տեքստի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այն հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Վերոգրյալից հետևում է, որ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն էլեկտրոնային փոստի միջոցով պատշաճ ծանուցված չի եղել և հետևաբար վերջինիս մոտ պարտավորություն չի առաջացել: Նման պայմաններում ակնհայտ է, որ առկա չէ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված որևէ հիմք՝ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ուստի, խնդրում ենք մերժել «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ներառելու ընթացակարգը»:

«Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/116 ընթացակարգի շրջանակներում 10.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 28.04.2021թ. թիվ ՊՆ/02/2253-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/3» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «Ինտերգեոտէկ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում առկա էր անհամապատասխանություն: 2021թ. ապրիլի 19-ին Մասնակցին ծանուցվել է տեխնիկական բնութագրի շտկման վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ուստի 22.04.2021թ. գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ

հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, մերժել է «Ինտերգեոտէկ» ՍՊ ընկերության հայտը:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար կից ներկայացվում են Մասնակցի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/116 ընթացակարգի շրջանակներում 10.05.2021թ. ժամը 09:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/116 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար գեոդեզիական գործիքների, նավիգացիոն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հրավերի 1-ին չափաբաժնի /գեոդեզիական գործիքներ/ բազմահաճախականի գեոդեզիական արբանյակային դիրքորոշման կայան՝ հսկման սարքով// տեխնիկական բնութագրում նշված է «Ընդունիչի պարամետրերը ոչ պակաս քան ներկառուցված հիշողությունը՝ 8GB», «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ներկառուցված հիշողությունը՝ 18GB (2Gb+16GB)»: Հաշվի առնելով, որ SD տեսակը ներկառուցված հիշողություն չէ, անհրաժեշտ է պարզաբանել, թե 2Gb և 16GB ցուցանիշներից, որն է ներկայացվում որպես ներկառուցված հիշողություն: Միաժամանակ ներկառուցված հիշողությունը պետք է լինի առնվազն 8GB:

Բացի այդ, «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերի տեխնիկական բնութագրում նշված «Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF-Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր դրույթը»:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 19.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Նույն արձանագրության համաձայն՝ 22.04.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել և որոշում է կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 05.05.2021թ. թիվ 26/26-1/6916-2021 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 28.04.2021թ. թիվ ՊՆ/02/2253-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից 07.05.2021թ. ներկայացված դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար գեոդեզիական գործիքների, նավիգացիոն սարքերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, մասնավորապես՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Հրավերի 1-ին չափաբաժնի /գեոդեզիական գործիքներ/ բազմահաճախականի գեոդեզիական արբանյակային դիրքորոշման կայան՝ հսկման սարքով// տեխնիկական բնութագրում նշված է «Ընդունիչի պարամետրերը ոչ պակաս քան ներկառուցված հիշողությունը՝ 8GB», «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է «Ներկառուցված հիշողությունը՝ 18GB (2Gb+16GB)»: Հաշվի առնելով, որ SD տեսակը ներկառուցված հիշողություն չէ, անհրաժեշտ է պարզաբանել, թե 2Gb և 16GB ցուցանիշներից, որն է ներկայացվում որպես ներկառուցված հիշողություն: Միաժամանակ ներկառուցված հիշողությունը պետք է լինի առնվազն 8GB:

Բացի այդ, «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերի տեխնիկական բնութագրում նշված «Անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող ապրանքների արտադրողի (MAF-Manufacturer's Authorization Form) կամ նրա կողմից Հայաստանի Հանրապետությունում լիազորված կազմակերպության (դիստրիբյուտորի) անունից (DAF-Distributer's Authorization Form) նամակ-լիազորագիր դրույթը»:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու վերաբերյալ՝ Ընկերությանն առաջարկելով ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը Armeps էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով 19.04.2021թ. ծանուցել է Ընկերությանը՝ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ 22.04.2021թ. նիստի ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ արձանագրված անհամապատասխանություններն Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել և որոշում է կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Կարգի 41-րդ կետով սահմանվում է, որ ***եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում <u>արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ,</u> ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ***

հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում, Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: ***Հակառակ դեպքում տվյալ*** մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ընկերությունը Կարգի 41-րդ կետի համաձայն ծանուցվել է անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ, սակայն սահմանված ժամկետում անհամապատասխանությունները չի շտկել, այսինքն՝ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշմամբ վկայակոչված այն հանգամանքին, որ ինչպես երևում է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրամադրված նյութերից, վերջինս ծանուցումն ուղարկել է geoproicelc@gmail.com էլ. փոստի հասցեին (ծանուցումների քաղվածք), մինչդեռ ընկերության կողմից ներկայացված հայտում (հավելված N 1) նշված է եղել info@igt.am էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

ՀՀ կառավարության 6 ապրիլի 2017 թվականի N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի համաձայն՝

1.Սույն կարգով կարգավորվում են էլեկտրոնային ձևով գնումների կատարման հետ կապված հարաբերությունները:

(...)

7. ***Մասնակիցը, գնումներին մասնակցելիս, իրավունք ունի էլեկտրոնային եղանակով՝***

1) ստանալու հրավեր.

2) ստանալու ծանուցում.

3) ներկայացնելու հայտ.

4) ներկայացնելու պարզաբանում ստանալու պահանջ:

8. ***<u>էլեկտրոնային գնումը ներառում է էլեկտրոնային եղանակով գնման ընթացակարգի իրականացումը և ծանուցումների տրամադրումը:</u>***

(...)

13. ***<u>Համակարգում որպես մասնակից գրանցվելու նպատակով մասնակիցը մուտք է գործում www.armeps.am կայք և լրացնում համապատասխան պահանջվող տեղեկատվությունը,</u>*** որից հետո գրանցումը հաստատելու նպատակով էլեկտրոնային փոստի միջոցով ստացված թվի և (կամ) տառերի կոմբինացիան (այսուհետ՝ տեղեկատվություն) մուտքագրում է համակարգ: Տեղեկատվությունը ճիշտ մուտքագրելուց հետո մասնակիցը համարվում է համակարգում գրանցված, ինչի մասին ավտոմատ եղանակով ստանում է ծանուցում: Մասնակցի գրանցումն ավտոմատ եղանակով համարվում է չեղյալ, եթե համակարգում գրանցվելու օրվանից հաշված 30 օրացուցային օրվա ընթացքում վերջինս մուտք չի գործում համակարգ կամ մուտք է գործում, սակայն, համակարգ չի մուտքագրում տեղեկատվությունը: Այս պարագայում իրականացվում է գրանցման նոր գործընթաց:

14. Պատվիրատուն սույն կարգի համաձայն գնում կատարելու համար համակարգում հրապարակում է գնման ընթացակարգի մասին հայտարարության և հրավերի տեքստերը՝ դրանք նույն օրը հրապարակելով նաև տեղեկագրում:

15. Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվող գնման հայտարարությունը և հրավերը պարտադիր պարունակում է տեղեկատվություն տվյալ գնման ընթացակարգը՝ էլեկտրոնային եղանակով իրականացման, ինչպես նաև հայտերի՝ էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ:

Համաձայն Ընթացակարգի հայտարարության՝ Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, հայտարարում է գնանշման հարցում, **<u>որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով:</u>**

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.9 ենթակետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը,

իսկ ***հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին***՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: (...)

Նույն կետի 8.18 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով:

Այսինքն՝ վերոգրյալից հետևում է, որ geoproicelc@gmail.com էլ. փոստի հասցեն նշվել է հենց Ընկերության կողմից Armeps համակարգում որպես մասնակից գրանցվելիս, իսկ համաձայն Ընթացակարգի հայտարարության՝ գնանշման հարցումն իրականացվել է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, որպիսի պայմաններում, ինչպես և սահմանվել է Ընթացակարգի հրավերով, հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, ուստի՝ Ընկերության կողմից ներկայացված դիրքորոշումը զուրկ է իրավական հիմքից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 05.05.2021թ. թիվ 26/26-1/6916-2021 գրությամբ «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ինտերգեոտէկ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**